



ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՊԵՐԸ ՌՈՒՍ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԵՏ

Ամենայն Հայոց Պատրիարք-կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի հանձնարարությամբ, մեծ պատիվ է ինձ համար այս պատկառելի գիտական ժողովին ներկայացնել իմ համեստ աշխատասիրությունը, նվիրված Հայ Առաքելական Եկեղեցու պատմական կապերին՝ Ռուս Պրավոսլավ մեծ Եկեղեցու հետ:

Հայ Եկեղեցու կապերը ռուս ժողովրդի հետ սկսվելով ինչպես մասնավոր ալի օրերից, երբ ռուս ժողովուրդն ընդունեց քրիստոնեությունը: Սակայն այդ իրադարձությունից առաջ էլ հայ հոգևորականները վկայություններ են թողել իրենց գրություններում ռուս ազգի մասին: Այսպես օրինակ, Է դարի Հայ Եկեղեցու գիտնական Անանիա վարդապետ Շիրակացին իր «Աշխարհացոյց»-ում գրում է սլավոնական 25 ցեղերի մասին: Հոգևորական պատմիչ Մովսես Կաղանկատվացին հիշատակում է ռուսներին՝ «ռուսիկներ» կամ «ռուսներ» անունով, որոնք «ոչ ավելի քան երեք ժամ ընթանալով մորիկի նման՝ համատարած Կասպից աշխարհածովի ելքով, հանկարծ հասան Աղվանքի Պարտավ մայրաքաղաքը... Նույն ինքը՝ Սաղարը, պաշարեց նրանց, բայց ոչ մի վնաս չկարողացավ տալ, որովհետև ուժի կողմից անհաղթելի էին»²:

Կան տեղեկություններ, որ հայերը 852 թ. կովելով արաբական խալիֆայի դեմ, դիմել են սլավոններին՝ օգնության համար:

Ըստ գիտնականների կարծիքի³, Ը դարի հայ եկեղեցական պատմիչ Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» երկում պատկանված Կուռո քաղաքի հիմնադրման պատմությունը⁴ ընդհանրություններ ունի Կիև քաղաքի կառուցման պատմության հետ, որը հիշատակված է կիևյան հնագույն տարեգրությունների ժողովածուում և «Անցած տարիների ասքում»⁵: Տավրիկյան աշխարհի (Հարավային Ռուսաստանի) մասին հայերը առաջին տեղեկությունները ստացել են

դեռևս Է դարում «Աշխարհացոյց»-ի միջոցով⁶: Իսկ հետագայում, սկսած Ը դարից, ռուսները ծանոթանում են հայերի հետ անմիջապես Կիևում:

Շատ հայեր բյուզանդական բանակում ծառայելիս, եղել են Կիևում կամ նրա հարակից շրջաններում: Այսպես, Կիև քաղաքի հնագույն անուններից մեկը՝ «Սամբատիս» կամ «Սամվատիս», կապվում է Բյուզանդիայի կայսր Լևոն Ե Հայի զահակապետան տարիներին քաղաքի ամրացման աշխատանքները ղեկավարող Սմբատ Բագրատունի հայ իշխանի անվան հետ⁷:

Մինչև Ռուսիայի մկրտությունը, քրիստոնեությունը Բյուզանդիայից թափանցել է Ռուսիա, և կան վկայություններ, որ հայերը որոշ դեր են խաղացել քրիստոնեության տարածման գործում, հատկապես Կիևի, Գալիցիայի, Ռուստովի և Մուրոմի շրջաններում⁸:

Հայ մատենագրության մեջ կան տեղեկություններ Ռուսիայի մկրտության մասին: ԺԱ դարի պատմիչ Ստեփանոս Տարոնացի Առողիկը «Պատմութիւն Տիեզերական» գրքում հիշատակում է Ռուսիայի մկրտության մասին⁹:

Կայուն հարաբերությունները սկսվում են մկրտությունից անմիջապես հետո, երբ Վլադիմիր Սվյատոսլավիչը՝ Կիևի Մեծ Իշխանը, ամուսնանում է բյուզանդական հայազգի կայսր Վասիլ Բ-ի քրոջ՝ Աննայի հետ¹⁰: Վերջինիս հետ Կիև են գալիս նաև հայազգի հոգևորականներ և վարպետներ, որոնց նպատակն էր օգնել Ռուսիայում քրիստոնեության ամրագրմանը: Միմյանի «Կիևի Պեչորյան Վարք Սրբոցում» պատմվում է Կիևում հայտնված հրաշք ճարտարապետների, գեղանկարիչների մասին¹¹, որոնց թվում եղել են նաև հայեր: Այդ փաստը հաստատվում է հայկական զարդանախշերի

(ռապիդ*) գոյությունը: Կիևում դրանք պատկերված են Սոֆիայի տաճարի խորանի արևելյան տեղադրված «Հաղորդության խորհուրդ» խճանկարում և Կիևի Պեչորյան վանքի Ուսպենսկու տաճարում, իսկ դրանց նմանները ավելի վաղ շրջանից կան Հայաստանում՝ Գանձասարի, Հառիճավանքի գմբեթների թմբուկի վրա, ինչպես նաև Հառիճավանքի հարավային ճակատի կենտրոնական պատուհանին: Մյուս ապացույցը Սոֆիայի տաճարում գտնվող Կիևի մեծ իշխանների քարադագաղների գեղարվեստական ձևավորումն է: Այդպիսի ձևավորման հանդիպում ենք նաև Աղցի Արշակունիների դամբարանում, Քասախի բազիլիկում և հատկապես Չվարթնոցում¹²:

Կիևում եկեղեցիներ և այլ շինություններ կառուցելու և վարդապետու ժամանակ հայ և ռուս վարդապետների համագործակցության մասին են վկայում նաև Յարոսլավ Իմաստունի քարադագաղի կափարիչի ներսում պահպանված հայերեն արձանագրության հետքերը: Կարդացվում են Ա, Պ, Գ, Ն, Բ տառերը¹⁴:

Վերոհիշյալ և նմանատիպ այլ վաստեր վկայում են երկու ժողովուրդների վարդապետների քրիստոնեական, եղբայրական համագործակցության մասին:

Հետևաբար, կարելի է ենթադրել, որ դեռևս Ժ դարի վերջերին և ԺԱ դարի սկզբներին Կիևում և ռուսական մյուս իշխանություններում մշտական բնակություն էին հաստատել հայեր, որոնք մասնակցում էին Ռուսիայի քրիստոնեացմանը: Նրանց մեջ կային հոգեվորականներ, ճարտարապետներ, նկարիչներ և այլ մասնագիտության տեր անձինք:

1068—1069 թթ. Կիևի Մեծ Իշխան Իգորյավիչը հրավիրում է հայկական հեծելապոլին պոլովցիների դեմ կռվելու համար: Այդ հեծելապոլը Անիի անկումից հետո հեռացել էր Հայաստանից և հաստատվել Թմուկտարական Կերչ քաղաքում¹⁵:

«Հայ ժողովրդի պատմությանը վերաբերող փաստաթղթերի ժողովածու»-ի մեջ նշվում է, որ հայերը հրավիրվում են Կիև՝ մասնակցելու 1062 թ. լեհերի դեմ պատերազմին, և «այս հրավերի հետևանքով Կիև են գալիս մեծ թվով հայեր, որոնք իրավունք են ստանում կառուցելու քարե եկեղեցի, որը Ժ2 դարում լեհ գրող Ստեփան Ռոշքայի ժամանակ արդեն ավերվել էր»¹⁶:

ԺԲ դարում արդեն հայ-ռուսական եկեղեցական կապերը դրվել էին ամուր հիմքերի վրա: 1157 թվականին Կիևում հրավիրվում է հայ հոգևորականների ժողով, որին

մասնակցում են նաև ռուս հոգևորականներ¹⁷: Այդ ժողովում քննարկվում է Կիևի հայ բնակիչ, ովև Մարտինի գիրքը, որտեղ հեղինակը քննադատում է Հայ Եկեղեցու վարդապետությունը: Հայ և ռուս հոգևորականները միախառնու դատապարտում են Մարտինին և նրա գիրքը այրում: Ենթադրվում է, որ այս Մարտինը եղել է պավլիկյան աղանդի հետևորդ¹⁸:

ԺԲ—ԺԳ դարերում սկսվում են նաև վարքագրական գործերի փոխադարձ թարգմանություններ: ԺԲ դարում հայերենից ռուսերեն են թարգմանվել «Վարք Ս. Գրիգոր Լուսավորչի» և «Վարք Հռիփսիմյանց Կուսանաց» երկերը: ԺԳ դարում ռուսերենից հայերեն է թարգմանվել «Վարք Բորիսի և Գլենի» երկը:

Կիևյան Ռուսիայում սկսվում է Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմյանց կույսերի պաշտամունքը: Մանավանդ Ս. Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը հետագայում մեծ չափերի, հասավ հատկապես Նովգորոդի և Մոսկվայի իշխանություններում:

Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին սրբապատկերը գտնվել է հայտնի Սպաս-Ներեդիցա վանքում (Նովգորոդ), որը կառուցվել է 1198 թ. և նկարապարզվել ԺԲ դարի վերջերին և ԺԳ դարի սկզբներին*: Այստեղ, հյուսիսային պատի վրա եղել է նաև Հռիփսիմյանց կույսերի նկարը՝ համապատասխան մակագրությամբ¹⁹:

Երկրորդ սրբապատկերը գտնվել է Թեոփոր Չորավարի եկեղեցում կառուցված 1361 թ.: Ճիշտ է, այստեղ մակագրություն չկա, սակայն այդ սրբապատկերը շատ հարավատ է Լուսավորչի այլ սրբապատկերներին, որոնք ունեն «Ս. Գրիգոր Հայ» մակագրությունը²⁰:

Մեզ հայտնի երրորդ սրբապատկերը գտնվում է Ս. Գրիգոր Լուսավորչի անվան եկեղեցում, Նովգորոդի մոտ, կառուցված 1445 թ.²¹:

Նովգորոդի հետ է կապված նաև Գրիգոր Լուսավորչի սրբապատկերների տարածումը²²:

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս այն սերտ կապը, որ հաստատվել էր հայ և ռուս եկեղեցիների միջև մինչ Մոսկվայի ռուսական թագավորության առաջացումը:

Այս հարաբերություններն այնքան են ամրապնդվում, որ Հայ Եկեղեցին անհրաժեշտ է գտնում Ռուսաստանում հաստատել թեմ: Մերոպ Ա Անավարդեցի կաթողիկոսը կոնդակով հիմնում է մի թեմ Լվով կենտրոնում:

* Այս եկեղեցին հիմնովին ավերվել է Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ:

* Ռապիդ—Լուսնի և արևի խորհրդանշանը:

նում²³: Այս թեմի մասին կա նաև հիշատակություն 1328 թ. Ղրիմում գրված մի ձեռագրի հիշատակարանում. «Հայոց ՊԻԸ՝ 1379 թվականին Հայոց մեծ դիտապետը կանչեց Տ. Հովհաննես կրոնասեր քահանային, որը Ս. Հակոբի պահքին նավարկեց և գնաց Սիս մայրաքաղաքը: Եվ Կոստանդին մեծ դիտապետից ձեռնադրվեց արքեպիսկոպոս ամենայն Ռուսաց աշխարհի և օլովսների»²⁴:

Ուրեմն կարելի է հաստատապես ասել, որ մինչև 1379 թ. հիմնադրվել է մի հայկական թեմ, որը կոչվել է Ռուսաստանի թեմ:

Հարավային Ռուսաստանի իշխանություններում ԺԳ դարից սկսած հայերն ունեցել են իրենց դպրոցներն ու հիվանդանոցները²⁵:

Ռուս-հայ եկեղեցական հարաբերությունները, որոնք սկիզբ էին առել Կիևյան Ռուսիայից և վարձացել ու ամրապնդվել Նովոգորոդյան իշխանության ժամանակ, եղել են բարեկամական, հատկապես Մոսկովյան Ռուսիայում այդ բարեկամությունը ավելի ևս սերտացավ: Այսպես, օրինակ, Կուլիկովյան ճակատամարտին մասնակցել են բազմաթիվ հայեր, որոնց հրամանատարն է եղել Օնդրեյ Սերկիլովիչը²⁶: Կուլիկովյան ճակատամարտի տարեգրության մեջ հիշատակվում է Սիմոն Մեկիկովիչը, որն առաջինն է հայտնում Մամայ խանի արշավանքի մասին դեպի Մոսկվա²⁷: Հայերի հավատարմությունը հիմք է տվել Նիկոնովյան տարեգրության հեղինակին, որ նա հայերին ներկայացնի որպես բարի լրատուներ²⁸: Այս շրջանում արդեն Ռուս Եկեղեցին հայերի նկատմամբ խիստ բարեկամաբար էր տրամադրված: Պատճառներից/մեկն այն էր, որ Ռուս Եկեղեցին 1439 թ. դատապարտեց Հույն Եկեղեցուն՝ Լատին Եկեղեցու հետ ֆլորենտական համաձայնության համար²⁹: Դատապարտելով Հույն Եկեղեցուն՝ Ռուս Եկեղեցին դատապարտում էր նաև հույների վերաբերմունքը Հայ Եկեղեցու նկատմամբ, ինչ որ ավելի էր մերձեցնում երկու Եկեղեցիներին:

Հայ-ռուսական եկեղեցական հարաբերությունները ավելի են սերտանում 1453 թ. Բյուզանդիայի անկումից հետո, երբ հայերն իրենց ապաստարանները կապում են Մոսկվայի հետ, մանավանդ որ Ռուս Եկեղեցին երբեք դավանական որևէ պիջուն չի պահանջում հայերից: Այս առիթով հարկ է նշել մի շատ հետաքրքիր փաստ: Կոստանդնուպոլսի անկումից անմիջապես հետո գրվում է մի պոեմ՝ «Տաղ ի վերոյ մոսկովու թագաւորին», որտեղ անհայտ հայ կրոնավորը գովերգում է Մոսկվայի թագավորի ուժն ու հպորությունը, արտահայտում այն հավատը, որ ունի նրա նկատմամբ ժողովուրդը որ-

պես իր ապաստարանի³⁰:

Հայ-ռուս եկեղեցական հարաբերությունների վարձացման որոշիչ փուլը կապված է Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի անվան հետ: Էջմիածնի զաղումի ժողովի որոշմամբ, Ստեփանոս Սալմաստեցին օգնության համար մեկնում է Եվրոպա, մասնավորապես Հռոմ: Հռոմում և մյուս քաղաքներում բանակցությունների ժամանակ կաթողիկոսը հասկանում է, որ կաթողիկ Եկեղեցին մտահոգված չէ հայ ժողովրդի ապաստարանմամբ, այլ ավելի շատ ցանկանում է կաթողիկացնել հայերին, մեծացնել իր իշխանության սահմանները: Ստեփանոս Սալմաստեցին հասնում է Մոսկվա: Այն փաստը, որ Ամենայն Հայոց կաթողիկոսը օգնության համար դիմել է Ռուսաստանին, նշանակալից է հայ-ռուս Եկեղեցիների մերձեցման տեսակետից³¹: Այս մերձեցումը և այն սպասելիքները, որ ունեին հայերը ռուսներից, արտահայտվել է նաև Կապանի գրավման ժամանակ: Կապանում բնակվող հայերը, որոնք գտնվում էին թաթարների կողմը, տարեգրի խոսքերով, հերոսաբար էին պահում իրենց: Տարեգիրը գովում է նրանց հավատարմությունը ռուսներին և խիպախությունը, երբ նրանք կրակում էին այնպես, որ ականները չդիպչեն ռուսներին: Այս է պատճառը, որ Իվան Ահեղը Կապանի գրավումից հետո բոլոր օտար բնակիչներին ուղարկում է իրենց երկրները, իսկ հայերին բնակեցնում Մոսկվայում, նրանց տալով բազմաթիվ արտոնություններ³²:

Իվան Ահեղից սկսած վերականգնվում է Ս. Գրիգոր Լուսավորչի հատուկ պաշտամունքը Ռուսաստանում: Իվան Ահեղի հրամանով Մոսկվայում, ի նշան Կապանի գրավման, կառուցվում են 9 մատուռներ՝ մեկ ընդհանուր հիմքով, որոնցից մեկը կոչվում է Լուսավորչի անվամբ: Տաճարը կոչվում է Լուսավորչի անվամբ: Տաճարը կոչվում է Ս. Վասիլի Երանելու տաճար, որը բազում անգամներ վերանորոգվում է, սակայն, ի տարբերություն տաճարի մյուս մատուռների, որոնք փոխել են իրենց անվանումը, Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցին հասել է մինչև մեր օրերը: Այն այսօր էլ կանգուն է և խորհրդանշում է հայ-ռուս եկեղեցիների եղբայրությունը, որը շարունակվում է դարեդար:

Մեր օրերին, սովետական իշխանության շրջանին, այդ եղբայրությունը հասել է իր գագաթնակետին հայ և ռուս ժողովուրդների անխախտ միության հիմքի վրա, սովետական բազմազգ ազգությունների մեծ ընտանիքում:

ՀՈՒՍԻԿ ՔՀՆ. ԼԱԶԱՐՅԱՆ

ԾԱՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան 1944, էջ 342:
2. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան 1969, էջ 264:
3. Աղայան Մ. Պ., Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Երևան 1981, էջ 47
4. Марр Н. Я., Книжные легенды об основании Куара в Армении и Киева на Руси, Известия ГАИМК, т. III, Л. 1928, стр. 257—287: Меликсет-Бек Л. М., Из истории армяно-украинских отношений. В кн. Исторические связи и дружба украинского и армянского народов. Ер. 1961, стр. 48: Еремян С. Т. О некоторых историко-географических параллелях в «Повести временных лет» и «Истории Тарона» Иоанна Мамиконяна: в сб. Исторические связи и дружба украинского и армянского народов, Киев, 1965, стр. 151—160: Айвазян К. В. Древнерусские источники периода Киевской Руси (XI—XII вв.) о Григории Просветителе, «Армянской вере» и «Армянской ереси», в Сб. Литературные связи, т. III, Ер. 1981, стр. 5—92.
5. Հովհան Մամիկոնյան, Պատմություն Տարոնոյ, աշխատությունը Ա. Արրահամյանի, Երևան, 1941, էջ 107—109:
6. «Повесть временных лет» ч. I., подготовка текста Д. С. Лихачева, перевод Д. С. Лихачева и Б. А. Романова. Под редакцией чл. кор. АН СССР В. П. Адриановой-Перетц, М—Л., 1950, стр. 12, 13.:
7. Արրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 342:
8. Ф. К. Бруни, О разных названиях Киева в прежнее время. В кн. Черноморье сб. исследований по истории, географии Южной России. Ф. Бруни, ч. II, Одесса, 1880, стр. 297—298. К. В. Айвазян, Древнерусские источники... стр. 9.
9. Зубрицкий Д., Критико-историческая повесть временных лет Червонной или Галицкой Руси, М. 1945, стр. 23: Халпахчян О. Х., Культурные связи Владимиро-Суздальской Руси и Армении, М., 1977, стр. 6.
10. Ստեփանոս Տարոնացոյ Ասողկան Պատմություն Տիգրեական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 133:
11. Д. Абрамович, Киево-Печерский Патерна у Клеву. 1931, с. 39. Айвазян К. В., Указ. соч. стр. 10.
12. Д. Абрамович, Указ. соч. стр. 39.
13. Халпахчян О. Х., Армяно-русские культурные отношения и их отражение в архитектуре, Ер. 1957, стр. 10.
14. Халпахчян, Указ. соч. стр. 9—10, его же. Культурные связи Владимиро-Суздальской Руси и Армении, М. 1977, с. 6; Айвазян К. В. Указ. соч. стр. 11.
15. Подробно см., Айвазян К. В., Указ. соч. стр. 12, его же. К дате поселения армян на Руси по данным средневековых армянских и русских авторов. В сбор. Литературные связи, т. I, Ер. 1973, стр. 5—61.
16. Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. II, М., 1838, стр. 283.
17. Подробно см., Айвазян К. В., Древнерусские источники..., стр. 51—92. Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. II, стр. 284.
18. Там же. стр. 283—285.
19. См. Халпахчян, Армяно-русские культурные отношения..., стр. 16. Толстой И., Кондаков Н., Русские древности в памятниках искусства, вып. VI. Памятники Владимира, Новгорода и Пскова. СПб., 1899, стр. 135; Успенский А. И. Фрески церкви Спаса на Нередице. М. 1910, стр. 5, 6, 8, 24. Каковкин А. Я., Образ Григория Армянского в некоторых памятниках древнерусского искусства.—ИФЖ, 1976, № 2 (73) стр. 166—167; Айвазян К. В., Культ Григория Армянского, «Армянская вера» и «Армянская ересь» в Новгороде (XIII—XVI вв.), в сб. Русская и армянская средневековые литературы, Л. 1982, стр. 260.
20. Там же.
21. Там же.
22. Ерицов А. Д., Первоначальное знакомство армян с северо-восточной Русью до воцарения дома Романовых. Кавказский вестник, Тифлис, № 12.
23. Այնշան, Կամենեց, Վենետիկ 1896, էջ 5—8:
24. Խաչիկյան Լ., ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան 1950, էջ 529:
25. Աղայան Մ. Պ., նշվ. աշխ., էջ 56—57:
26. Сказание о Куликовской битве, в кн. Воинские повести Древней Руси, под ред. В. П. Андриановой-Перетц, М—Л., 1949, стр. 37; Айвазян К. В. Источники XIV—XVI вв. об Армянах в Московской Руси, в сб. Литературные связи, Ереван, 1984, т. 4 стр. 8.
27. Там же.
28. ПСРЛ, т. I, стр. 81; Айвазян К. В., Источники..., стр. 8—10.
29. Айвазян К. В., Источники..., стр. 10.
30. Մուցակունյան Ա., Հայկական միջադարձան ժողովրդական երգեր, Եր. 1956, էջ 272—288: Айвазян К. В., Источники... стр. 24—25.
31. Այնշան, Կամենեց, Վենետիկ, 1895, էջ 135: Очерки истории СССР, кон. XV—нач. XVII вв., М. 1955, стр. 850—851.